# ՆԿԱՐԱԳԻՐ

**առաջարկվող ապրանքի ամբողջական**

Միլլեննիում Ֆորս-ն ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-26/75 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

| Չափաբաժնի համար | Առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը |
|---|---|
| 5 | Երկհարկանի մահճակալ՝ Էլեգիա կամ Ստոլլայն կամ Իմպերիալ կամ Մեբելգրադ ապրանքանիշերի, որի կառուցվածքային և ֆունկցիոնալ պարամետրերը պետք է ապահովեն ամուր և հարմարավետ օգտագործում. ընդհանուր չափսերը են առնվազն 205x 170x 85 սմ՝ պահպանելով ամրության և կայունության պահանջները: Վերին հարկում տեղակայված քնելու հատվածը պետք է ունենա առնվազն 80 x 190 սմ չափերի օգտակար մակերես, իսկ ներքևի հատվածը պետք է լինի բազմոցի տեսքով, բացվող մեխանիզմով և ունենա հնարավորություն լրացուցիչ մահճակալ դառնալու՝ առնվազն 120 x 190 սմ չափերի քնելու մակերեսով, ինչպես նաև առկա լինի պահոց իրերի համար: Կառուցվածքային հարմարավետությունն ապահովելու նպատակով վերին հարկ տանող աստիճանները պետք է ամրացված լինեն մահճակալի կողային հատվածին, արտադրված լինեն չժանգոտվող մետաղից և համալրված բռնակներով՝ ապահովելու անվտանգ և հարմարավետ բարձրացում: Հավաքածուի պարտադիր բաղադրիչ են վերին և ներքևի հարկերի համար նախատեսված ներքնակները: Արտադրության հիմքում պետք է կիրառվի որակյալ լամինացված ԼԴՍՊ, որն ապահովում է ինչպես գեղագիտական, այնպես էլ մեխանիկական ցուցանիշների բարձր որակ: Ապրանքը շահառուի հասցե է մատակարարվելու քանդված վիճակում՝ ամբողջությամբ կցամասերով, գործարանային ստվարաթղթե և պաշտպանիչ փաթեթավորման մեջ, որտեղ յուրաքանչյուր տարր լրացուցիչ ապահովված կլինի հաստ թղթով կամ փրփրապատ շերտերով՝ տեղափոխման ընթացքում հնարավոր վնասներից պաշտպանելու համար: Գույնը համաձայնեցնել պատվիրատուի հետ: Հավաքումն իրականացվելու է շահառուի բնակարանում՝ մատակարարի միջոցներով: Մատակարարի կողմից |

| | |
|---|---|
| | պետք է տրամադրվի առնվազն 6 ամիս երաշխիք, իսկ մատակարարման պահին արտադրողից կամ մատակարարից պահանջվում է ներկայացնել ապրանքի համապատասխանության հավաստագրեր և սերտիֆիկատներ, որոնք հաստատում են դրա համապատասխանությունը գործող տեխնիկական նորմերին և ստանդարտներին: Մատակարարումը կատարել անհրաժեշտ քանակներով` պատվիրատուի նախնական պահանջի (հայտի) հիման վրա` այն ներկայացվելուց հետո 3-օրյա ժամկետում: Նախնական հայտը ներկայացվում է էլեկտրոնային փոստի միջոցով: |

# ПОЛНОЕ ОПИСАНИЕ

**предлагаемого товара**

Միլլեննիում Ֆորս ՍՊԸ в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-26/75 ниже представляет полное описание предлагаемого им товара.

| Номер лота | Предлагаемый товар |
|---|---|
| | технические характеристики |
| 5 | |